ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան

16.06.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ՍՑ-ԱՄ-2017/11

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. <u>**ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ բնապահպանության նախարարության 07.05.2017թ. թիվ 5/06.2/50920-17 գրության հիման վրա, 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն 01.06.2017թ. թիվ 24010 գրությամբ, հայտնել է որ մասնակցել է ՀՀ բնապահպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ):

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն գտնում է, որ Ընկերության կողմից թիվ 18-րդ չափաբաժնով ներկայացված ապրանքը համարժեք է Պատվիրատուի կողմից Ընթացակարգի հրավերի թիվ 18-րդ չափաբաժնով պահանջված ապրանքին և բոլոր պարամետրերը համապատասխանում են, բացառությամբ ապրանքի անվանումից: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պատվիրատուն նշել է ապրանքի անվանում կամ համարժեք նշումով, որը նախատեսված է Օրենքի 12-րդ հոդվածի 5-րդ մասով, ուստի Ընկերությունը, ներկայացնելով համարժեք ապրանք, գնման գործընթացի շրջանակում կեղծ տվյալ չի ներկայացրել:

Միաժամանակ, Ընկերությունը հայտնել է, որ 19-րդ չափաբաժնի մասով նույնպես կեղծ տվյալ չի ներկայացրել: Տարբերությունն այն է, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության արտադրության ապրանք (յուղ), իսկ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից պահանջվող ապրանքը եվրոպական արտադրության է կամ համարժեք: Ռուսական և եվրոպական լաբորատորիաների փորձաքննությունները անցկացվում են տարբեր չափորոշիչներով և տարբեր ջերմային ռեժիմներով, օրինակ՝ եվրոպական լաբորատորիան յուղի խտությունը փորձարկում է 15°C պայմաններում, որը տվյալ ապրանքի համար կազմել է 0,860-0,875 գ/մլ, իսկ ռուսական լաբորատորիան նույն խտությունը փորձարկել է 20°C պայմաններում, որը փաստացի կազմել է 0,874 գ/մլ: Իսկ որոշ պարամետրեր ռուսական լաբորատորիան փորձաքննություն չի անցկացրել նպատակահարմար չհամարելով, քանի որ այդ պարամետրերը էական ազդեցություն չէին կարող ունենալ ապրանքի (յուղի) որակական հատկանիշների վրա:

Ընկերությունը հայտնել է նաև, որ ընդհանուր համաշխարհային ցուցիչ համարվող ամերիկյան նավթի ինստիտուտի կողմից սահմանված API-ն «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքի համար հանդիսացել է 10W40 API SL/CF կիսասինթետիկ, որը համապատասխանում է Պատվիրատուի Տեխնիկական բնութագրով պահանջված 19-րդ չափաբաժնին:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը Խորհրդին խնդրել է հաշվի առնել վերոհիշյալ հանգամանքները և «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր մասնակցությունը, ով պնդել է 01.06.2017թ. թիվ 24010 գրությամբ Խորհրդին ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>

ՀՀ բնապահպանության նախարարությունը 07.05.2017թ. թիվ 5/06.2/50920-17 գրությամբ ներկայացրել է ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 02.06.2017թ. ժամը 11:00-ի նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը՝ թիվ 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով, մերժելով Ընկերության հայտը, գործել է իրավաչափ, քանի որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում Ընթացակարգի հրավերով նախատեսված պահանջներին:

4. ՍՑ-ԱՄ-2017/11 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2017/11 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ բնապահպանության նախարարության կարիքների համար ավտոպահեստամասերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետը սահմանում է հետևյալը.

«3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին gnumner.mnp@yandex.ru է ուղարկում սույն հրավերի Հավելված №5-ով նախատեսված գրությունը, որին կցվում է ***առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը***:

3. Ընկերությունը հայտի 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 18-րդ և 19-րդ չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը:

4. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի (այսուհետ նաև՝ Տեխնիկական բնութագիր), 18-րդ չափաբաժնով՝ «Փոխանցման տուփի յուղ» գնման առարկայի համար սահմանվել է՝ Շելլ GL-4 կամ GL-5 կամ համարժեք, SAE 75W-90, խտությունը 15°C պայմաններում՝ 0.865-0.870 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 13.9-14.2 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 64.0-64.5 մմ2/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 170-200, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 180°C, մածուցիկության հատկության կորուստը -45°C ցածր: Չափածրարված 1 լիտրանոց տարրաներով:

5. «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով Տեխնիկական բնութագրի 18-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Կանցլեր GL4/5 SAE 75W-90 semi/sint», խտությունը 15°C պայմաններում՝ 0.868 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 13,9 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 64 մմ²/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 175, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 180°C, մածուցիկության հատկության կորուստը -45°C ցածր: Փաթեթավորված 1 լիտրանոց տարաներով:

6. Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագրի, 19-րդ չափաբաժնով՝ «Շարժիչի յուղ» գնման առարկայի համար սահմանվել է՝ յուղեր ունիվերսալ, շաժիչային, Կաստրոլ API SL/CF 10W-40 կամ համարժեքը: Տվյալ յուղերի կազմի մեջ են մտնում նավթը և որոշ քիմիական նյութեր: Քիմիական հավելայնութերի միջոցով արհեստականորեն բարձրացվում են յուղերի որոշակի հնարավորություններ: Քիմիական բաղադրությունը՝ կիսասինթետիկ: Խտությունը 15°C պայմաններում 0.860-0.875 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում 14.3-14.4 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում 95.0-97.0 մմ2/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 145-155, դինամիկ մածուցիկությունը 6800-7000 մՊաx/վրկ, սառչելու ջերմաստիճանը -35°C ցածր, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 230°C: Չափածրարված 4 կամ 5 լիտրանոց տարրաներով:

7. «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով Տեխնիկական բնութագրի 19-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ յուղեր ունիվերսալ, շաժիչային,

Ռուսական «Դելֆին Դիստրիբյուշեն» ՍՊԸ արտադրության LUXE HIT SAE 10w40 API SL/SF: Տվյալ յուղերի կազմի մեջ են մտնում նավթը և որոշ քիմիական նյութեր: Քիմիական հավելյանութերի միջոցով արհեստականորեն բարձրացվում են յուղերի որոշակի հնարավորություններ: Քիմիական բաղադրությունը՝ կիսասինթետիկ: Խտությունը 20°C պայմաններում 0.874գ/մլ: Իսկ որոշ պարամետրեր ռուսական լաբորատորիան փորձաքննություն չի անցկացրել: Փաթեթավորված 5 լիտրանոց տարաներով:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2017թ. ժամը 17:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 6.2.3 կետով «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն սահմանված կարգով ծանուցվել է երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ Ընթացակարգի 18 և 19-րդ չափաբաժինների մասով, ներկայացնել Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի 3.1 կետով նախատեսված փաստաթղթերը՝ Հրավերի Հավելված 5-ով առաջարկված գրությունը, որին անհրաժեշտ է կցել առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

9. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 3.2.2 կետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի թիվ 168-Ն որոշման 52-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.1.3 կետի 2-րդ ենթակետը, մերժել է Ընկերության հայտը Ընթացակարգի 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

5. <u>Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

Խորհուրդն, ուսումնասիրելով << ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությունը, << բնապահպանության նախարարության 07.05.2017թ. թիվ 5/06.2/50920-17 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:***

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: ***Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:***

Նույն հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ ***գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)***:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ << գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

<< կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է, որ ***մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ, պայմանով, որ 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:***

Կարգի 51-րդ կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի,

իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում ***հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 52-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝ ***չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:***

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ II-ի 3-րդ կետը սահմանում է հետևյալը.

«3.1 Սույն հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հավաստելու և սույն հրավերի 4.3 կետով նախատեսված տեղեկատվությունը տրամադրելու համար առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցը Պատվիրատուի էլեկտրոնային փոստին gnumner.mnp@yandex.ru է ուղարկում սույն հրավերի Հավելված №5-ով նախատեսված գրությունը, որին կցվում է ***առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը***:

Ընկերությունը հայտի 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում իր կողմից ներկայացված հայտով առաջարկվող՝ 18-րդ և 19-րդ չափաբաժիններում նշված ապրանքների տեխնիկական բնութագրերը համապատասխանում են «ՇՀԱՊՁԲ-15/6 (ՀՀ-ԲՆ-ԱՊՁԲ-17/07)» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին:

Ընդ որում՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքների անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ տեխնիկական բնութագրի, 18-րդ չափաբաժնով՝ «Փոխանցման տուփի յուղ» գնման առարկայի համար սահմանվել է՝ Շելլ GL-4 կամ GL-5 կամ համարժեք, SAE 75W-90, խտությունը 15°C պայմաններում՝ 0.865-0.870 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 13.9-14.2 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 64.0-64.5 մմ2/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 170-200, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 180°C, մածուցիկության հատկության կորուստը -45°C ցածր: Չափածրարված 1 լիտրանոց տարրաներով:

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով Տեխնիկական բնութագրի 18-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ «Կանցլեր GL4/5 SAE 75W-90 semi/sint», խտությունը 15°C պայմաններում՝ 0.868 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 13,9 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 64 մմ²/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 175, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 180°C, մածուցիկության հատկության կորուստը -45°C ցածր: Փաթեթավորված 1 լիտրանոց տարաներով:

Ընթացակարգի հրավերին կից պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ի՝ Տեխնիկական բնութագրի, 19-րդ չափաբաժնով՝ «Շարժիչի յուղ» գնման առարկայի համար սահմանվել է՝ յուղեր ունիվերսալ, շաժիչային, Կաստրոլ API SL/CF 10W-40 կամ համարժեքը: Տվյալ յուղերի կազմի մեջ են մտնում նավթը և որոշ քիմիական նյութեր: Քիմիական հավելանյութերի միջոցով արհեստականորեն բարձրացվում են յուղերի որոշակի հնարավորություններ: Քիմիական բաղադրությունը՝ կիսասինթետիկ: Խտությունը 15°C պայմաններում 0.860-0.875 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում 14.3-14.4 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում 95.0-97.0 մմ2/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 145-155, դինամիկ մածուցիկությունը 6800-7000 մՊաxվրկ, սառչելու ջերմաստիճանը -35°C ցածր, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 230°C: Չափածրարված 4 կամ 5 լիտրանոց տարրաներով:

«Ժակ և Գոռ» ՍՊԸ-ն Ընթացակարգի հրավերի Հավելված N 5-ով Տեխնիկական բնութագրի 19-րդ չափաբաժնի համար առաջարկել է՝ յուղեր ունիվերսալ, շաժիչային, Ռուսական «Դելֆին Դիստրիբյուշեն» ՍՊԸ արտադրության LUXE HIT SAE 10w40 API

SL/SF: Տվյալ յուղերի կազմի մեջ են մտնում նավթը և որոշ քիմիական նյութեր: Քիմիական հավելայնութերի միջոցով արհեստականորեն բարձրացվում են յուղերի որոշակի հնարավորություններ: Քիմիական բաղադրությունը՝ կիսասինթետիկ: Խտությունը 20°C պայմաններում 0.874գ/մլ: Իսկ որոշ պարամետրեր ռուսական լաբորատորիան փորձաքննություն չի անցկացրել: Փաթեթավորված 5 լիտրանոց տարաներով:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 13.04.2017թ. ժամը 14:30-ի նիստի թիվ 6 արձանագրության 3.2.2 կետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի թիվ 168-Ն որոշման 52-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև Ընթացակարգի հրավերի 1-ին մասի 8.1.3 կետի 2-րդ ենթակետը, մերժել է Ընկերության հայտը Ընթացակարգի 18-րդ և 19-րդ չափաբաժինների մասով՝ այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերը չեն համապատասխանում հրավերով նախատեսված պահանջներին:

Այսպիսով, Խորհուրդը գտնում է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, 18-րդ չափաբաժնի մասով մերժելով «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի հայտը, գործել է ոչ իրավաչափ, քանի որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից Ընթացակարգի հրավերի 18-րդ չափաբաժնի համար առաջարկված ապրանքի տեխնիկական բնութագիրը՝ ***«Կանցլեր GL4/5 SAE 75W-90 semi/sint», խտությունը 15°C պայմաններում՝ 0.868 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 13,9 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 64 մմ²/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 175, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 180°C, մածուցիկության հատկության կորուստը -45°C ցածր: Փաթեթավորված 1 լիտրանոց տարաներով,*** համապատասխանում է Ընթացակարգի հրավերի 18-րդ չափաբաժնով պահանջվող՝ ***Շելլ GL-4 կամ GL-5 կամ համարժեք, SAE 75W-90, խտությունը 15°C պայմաններում՝ 0.865-0.870 գ/մլ, կինեմատիկ մածուցիկությունը 100°C պայմաններում՝ 13.9-14.2 մմ2/վրկ, կինեմատիկ մածուցիկությունը 40°C պայմաններում՝ 64.0-64.5 մմ2/վրկ, մածուցիկության գործակիցը՝ 170-200, բռնկման ջերմաստիճանը ոչ պակաս 180°C, մածուցիկության հատկության կորուստը -45°C ցածր: Չափածրարված 1 լիտրանոց տարրաներով,*** ապրանքի տեխնիկական բնութագրին:

Ինչ վերաբերվում է Ընթացակարգի հրավերի 19-րդ չափաբաժնին, ապա Խորհուրդը արձանագրում է, որ Ընկերության կողմից ներկայացված և Ընթացակարգի հրավերով պահանջվող ապրանքի տարբերությունն այն է, որ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ապրանքը հանդիսանում է Ռուսաստանի Դաշնության արտադրության ապրանք (յուղ), իսկ ՀՀ բնապահպանության նախարարության կողմից պահանջվող ապրանքը եվրոպական արտադրության է կամ համարժեք: Ռուսական և եվրոպական լաբորատորիաների փորձաքննությունները անցկացվում են տարբեր չափորոշիչներով և տարբեր ջերմային ռեժիմներով, օրինակ՝ եվրոպական լաբորատորիան յուղի խտությունը փորձարկում է ***15°C*** պայմաններում, որը տվյալ ապրանքի համար կազմել է ***0,860-0,875 գ/մլ***, իսկ ռուսական լաբորատորիան նույն խտությունը փորձարկել է ***20°C*** պայմաններում, որը փաստացի կազմել է ***0,874 գ/մլ***: Իսկ որոշ պարամետրեր ռուսական լաբորատորիան փորձաքննություն չի անցկացրել նպատակահարմար չհամարելով, քանի որ այդ պարամետրերը էական ազդեցություն չէին կարող ունենալ ապրանքի (յուղի) որակական հատկանիշների վրա:

Ելնելով վերոգրյալից, Խորհուրդը գտնում է, որ գնահատող հանձնաժողովի որոշումը չի կարող մեկնաբանվել որպես Ընկերության կողմից ներկայացված կեղծ տվյալ պարունակող տեղեկատվություն:

Այսպես, օրենքի Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե ***<u>հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:</u>***

Խորհուրդն, ուսումնասիրելով «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը, գտնում է, որ Ընկերության կողմից հայտի թիվ 4.1 հավելվածով ներկայացված հայտարարությունը չի հանդիսանում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված կեղծ տվյալի ներկայացում, հետևաբար Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 22.05.2017թ. թիվ 03/73-3/8986-17 գրությամբ «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 03012667) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ